МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«08» փետրվարի 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2023 թվականի նոյեմբերի 14-ին մեքենամեխանիզմների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/49» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 1-6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից), որին սահմանված կարգով, անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցվել է պայմանագրի նախագիծը: Պայմանագիրը երկկողմ հաստատվել է 2023 թվականի դեկտեմբերի 18-ին:

Պայմանագրի կնքումից հետո պարզվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում (դիմում-հայտարարություն) նշված է եղել այլ (կեղծ) ՀՎՀՀ, այդ իսկ պատճառով հայտերի բացման և գնահատման նիստում Մասնակցի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելը չի բացահայտվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից Հավելված 1-ում (դիմում-հայտարարություն) ներկայացվել է այլ (կեղծ) ՀՎՀՀ, իսկ պայմանագրի նախագծում արդեն իսկ Մասնակիցը ներկայացրել է իր ընկերության ՀՎՀՀ-ն, Պատվիրատուն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետով, միակողմանի լուծել է 2023 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/49» ծածկագրով մեքենամեխանիզմների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը, որի մասին ծանուցումը 29.01.2024թ.-ին հրապարակվել է ՀՀ ֆինանսների նախարարության https://gnumner.minfin.am/ պաշտոնական տեղեկագրում:

Ստորև ներկայացնում եմ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու փաստը հավաստող տեղեկատվությունը.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը/	Գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է /գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ	05025434	Արագածոտնի մ.,գ. Աշնակ, Վրեժ Իսրաելյան փող,տուն 42	V			Որոշման ամսաթիվը՝ 08.02.2024թ, ընթացակարգի ծածկագիրը՝ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/49»

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը, որոշում եմ.

Առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարությանը Մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ